



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ  
HELSINKI CITIZENS' ASSEMBLY  
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի  
Հանրապետություն, Վանաձոր  
Տիգրան Մեծի պողոտա 59  
59 Tigran Metsi st.  
Vanadzor, 2021, Republic of Armenia  
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68  
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36  
E-mail: [info@hcav.am](mailto:info@hcav.am)  
Ե/2021- 01. 02/40  
01. 02.2021թ.

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ՝  
Արարատ Միրզոյանին

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

2021 թվականի հունվարի 22-ին Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուների ընտրության համար հրավիրված նիստում ՀՀ Ազգային ժողովում պատգամավորները հանդես եկան ելույթներով և տարբեր հարցադրումներով: Ի թիվս այլ պատգամավորների, ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածու Դավիթ Խաչատուրյանին ուղղված հարցադրման ժամանակ, հնչեցրեց հետևյալ արտահայտությունը. «...*Դուք երկար տարիներ աշխատել եք Բաց հասարակություն հիմնադրամում, և հիմա, ընդհուպ մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը արձանագրել է այն որպես Ձեր վարկանիշի վրա բացասական իմաստով ազդեցություն թողնող որոշակի հետք: Ինձ հետաքրքիր է. Դուք փաստորեն լինելով այլ սեկտորի աշխատակից, կատարել եք մասնավոր պատվերներ և բազմիցս հնչել են խոսակցություններ, որ, այսպես ասած Սորոսի հիմնադրամը գործել է ընդդեմ Հայաստանի Հանրապետության: Ես կուզենայի, որ Դուք այստեղ հստակ ասեք, որ գործելու եք հանուն Հայաստանի Հանրապետության»:* (Կից՝ տեսանյութի էլեկտրոնային հղումը. 0:40 վայրկյանից<sup>1</sup>)

Այս ելույթից հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ, ըստ որի՝ «թեկնածուի վերաբերյալ ներկայացված բարեվարքության եզրակացության մեջ Հանձնաժողովի կողմից նման

<sup>1</sup> <https://www.facebook.com/24news.am/posts/809751666333972>

գնահատականներ արտացոլված չեն, և Ազգային Ժողովի պատգամավոր **Թագուհի Թովմասյանի հրապարակած տեղեկությունը չի արտացոլում ճշմարտությունը:**

Հանձնաժողովը վերստին հիշեցնում է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հանձնաժողովի կողմից տրամադրված բարեկարքության **եզրակացությունները հրապարակման ենթակա չեն և կոչ է անում բոլոր պաշտոնատար անձանց, ովքեր ի պաշտոնե ստանում են այդ եզրակացությունները, խստորեն պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները և գերծ մնալ օրինականության սահմաններից դուրս եկող ցանկացած գործողությունից:**

Բացի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անունից կեղծ տեղեկատվության հրապարակումը, ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը, անտեսելով պատգամավորի դերն ու առաքելությունը ժողովրդավարական և իրավական պետության սահմանադրական սկզբունքների ամրապնդման, պաշտպանության գործում, փոխանակ իր մոտեցումներով, գործողություններով և հայտարարություններով նպաստելու ժողովրդավարական և իրավական պետության արժեքների իրացմանը, հանդես է գալիս էլույթով, որն ուղղված է այդ սկզբունքների արժեզրկմանը: Արդյո՞ք մարդու իրավունքների, հաշվետու և թափանցիկ կառավարման, ժողովրդավարության սահմանադրական արժեքների պահպանմանն են ուղղված «Սորոսի հիմնադրամը գործել է ընդդեմ Հայաստանի Հանրապետության» խիստ վստահ հնչեցրած պնդումը ԱԺ դահլիճից, որ ոչ այլ ինչ է, քան տարիներ շարունակ ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության ամենատարբեր բնագավառներում, ժողովրդավարության ինստիտուտների կայացմանը նպաստած հաշվետու և թափանցիկ կառավարման ձևավորմանն աջակցություն ցուցաբերած հիմնադրամի գործունեության նկատմամբ չհիմնավորված և չպատճառաբանված, ակնհայտ կեղծ մոտեցում, որն ուղղված է հասարակության մոտ անհիմն և կեղծ պատկերացումներ ստեղծելուն:

Այսպիսով, ստացվում է, որ ՀՀ ԱԺ պատգամավորը իրեն թույլ է տվել հրապարակային ձևով հայտարարություն կատարել՝ մեջբերելով իբրև թե

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տված եզրակացությունը, դրանով միաժամանակ թույլ տալով երեք՝ իրեն չվերապահված լիազորություն.

- նախ հրապարակային ձևով կեղծել է հանձնաժողովի կողմից տված եզրացությունը, որի անվան տակ ներկայացրել է իրականության հետ որևէ աղերս չունեցող իր սուբյեկտիվ դիրքորոշումը,
- փորձել է մեջբերում կատարել մի աղբյուրից, որից մեջբերում կատարելը ի պաշտոնե արգելված է ՀՀ պաշտոնատար անձի համար,
- ՀՀ ԱԺ ամբիոնից հնչեցրել է ակնհայտ կեղծ պնդումներ «Բաց հասարակության հիմնադրամներ»-Հայաստան գրասենյակի գործունեության վերաբերյալ, չունենալով դրա վերաբերյալ որևէ իրավական հիմք հանդիսացող փաստաթուղթ կամ դատարանի ուժի մեջ մտած որոշում:

Վերոնշյալով պայմանավորված, գտնում եմ, որ այս ելույթով ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը ակնհայտորեն սահմանազանցել է իրեն վերապահված լիազորությունները և խախտել ՀՀ ԱԺ պատգամավորի վարքագծին վերապահված հստակ կանոնները, քանզի ՀՀ Ազգային ժողովի Կանոնակարգ Սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***Պատգամավորը պարտավոր է պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները:*** Ուստի, սույն գործով ակնհայտորեն տեսնելով ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանի վարքագծի սահմանազանցումը, որը պաշտոնապես արձանագրվել է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տարածած հայտարարության մեջ, դիմում եմ Ձեզ՝ Թագուհի Թովմասյանի վկայակոչված վարքագծի վերաբերյալ քննությունը Պատգամավորական էթիկայի հարցերով զբաղվող ժամանակավոր հանձնաժողովի ուսումնասիրությանը հանձնելու, վերջինիս միջոցով Թագուհի Թովմասյանի անպատասխանատու վարքագծին համարժեք իրավական գնահատական ու եզրակացություն տալու և ՀՀ Ազգային ժողովում պատգամավորների կողմից, հետայսու, նմանատիպ ոչ կոմպետենտ և խիստ սուբյեկտիվ վարքագծային դրսևորումները իսպառ բացառելու հարցով:

**Կից ներկայացնում եմ՝**

Թագուհի Թովմասյանի ելույթի էլեկտրոնային հղումը՝

<https://www.facebook.com/24news.am/posts/809751666333972>

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրարած հայտարարության էլեկտրոնային հղումը՝

[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=264137965078685&id=103388151153668](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=264137965078685&id=103388151153668)

Հարգանքով,  
Կազմակերպության նախագահ՝



Կատարող՝ Ն. Տեր-Մովսիսյան  
Էլ հասցե՝ [ntermovsisyan@hcav.am](mailto:ntermovsisyan@hcav.am)